

## ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՎԵՃԵՐՈՎ ԳՈՐԾԸ ՈՂՋԱՄԻՏ ԺԱՄԿԵՏՈՒՄ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՌՆԵԼՈՒ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱԿԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Լարիսա Բաղդասարյան

*ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի ասպիրանտ*

Կորպորատիվ վեճերով գործի քննությունը, կարելի է ասել, ընթանում է այն նույն կանոններով, ինչ յուրաքանչյուր հայցային վարույթ, սակայն որոշ տարբերություններով: Կորպորատիվ վեճերով գործի քննության ժամկետների մասով հատուկ կանոններ սահմանված չեն, բացառությամբ իրավաբանական անձի գործունեության վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու մասին իրավաբանական անձի մասնակցի (անդամի) պահանջով վարույթի վերաբերյալ գործերով, ինչն էլ կարող է հանգեցնել հայցվող պահանջն ըստ էության սպառելուն: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի<sup>1</sup> (այսուհետ նաև՝ Օրենսգրք) 165-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցային վարույթի գործերով նախնական դատական նիստի անցկացումը պարտադիր է, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը գործը քննում է պարզեցված վարույթի կարգով կամ կիրառում է արագացված դատաքննություն: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ նաև՝ Եվրոպական դատարան) իր նախադեպային որոշումներում բազմիցս նշել է, որ առանց բանավոր քննության դատաքննությունը չի խախտում կողմերի դատական պաշտպանության իրավունքն այն դեպքերում, երբ վեճի լուծման համար դատարանին անհրաժեշտ է պարզել հարցերի սահմանափակ շրջանակ, և այդ հարցերն իրավունքի հարցեր են<sup>2</sup>: Այսինքն՝ յուրաքանչյուր գործով դատարանը քննության առարկա պետք է դարձնի՝ արդյո՞ք հնարավոր է գործի քննությունն առանց նախնական դատական նիստ հրավիրելու անցկացնել: Ընդ որում կորպորատիվ վեճերի վերաբերյալ որոշակի գործերի քննության առնչությամբ կան սահմանափակումներ թե՛ պարզեցված և թե՛ արագացված դատաքննությամբ գործը քննելու վերաբերյալ, որոնք սահմանված են Օրենսգրքի 297-րդ և 303-րդ հոդվածներով: Վերը նշված իրավանորմերի վերլուծությամբ կարելի է փաստել, որ արագացված դատաքննության իրականացում ոչ գույքային պահանջի վերաբերյալ կորպորատիվ վեճերով հնարավոր չէ իրականացնել, բացառությամբ այն դեպքերի, երբ մյուս կողմը չի առարկում դրա դեմ, կամ գործին մասնակցող անձինք գրավոր տեղեկացրել են դատարանին դատական նիստերին չմասնակցելու վերաբերյալ, կամ գործի փաստական հանգամանքներն անվիճելի են, կամ երբ պատասխանողն ընդունել է հայցապահանջները: Հետևապես՝ կորպորատիվ վեճերով գործի քննության առնչությամբ ունենք գործի քննության ողջամիտ ժամկետների պահպանման խնդիր: Սակայն ակնհայտ է, որ ոչ բոլոր կորպորատիվ վեճերով ի սկզբանե հնարավոր կլինի պարզել փաստերի անվիճելիությունը, և ոչ բոլոր կորպորատիվ վեճերով է միայն անհրաժեշտ պարզել իրավունքի վերաբերյալ հարցեր: Առաջանում է մի իրավիճակ, որտեղ հնարավոր է գործի քննության ժամանակ արդեն հայցվող գործողության

<sup>1</sup> Ընդունվել է 09.02.2018թ., ուժի մեջ է մտել 09.04.2018թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2018.03.05/16(1374):

<sup>2</sup> Տե՛ս Ալլան Ջեյքոբսոնն ընդդեմ Եվեդիայի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 19.02.1998 թվականի վճիռը:

անհրաժեշտությունը վերանա, կորցնի իր արդիականությունը հայցվորի համար, հայցն իրեն սպառի գործի քննության երկար տևողության պատճառով, եթե հնարավոր չլինի գործը քննել կա՛մ պարզեցված վարույթով, կա՛մ արագացված դատաքննությամբ: Գտնում ենք, որ անարդյունավետ կլինի նաև գործի քննության պայմանական սեղմ ժամկետներ ևս օրենսդրորեն ամրագրելը, քանի որ յուրաքանչյուր գործ առանձնահատուկ է իր բարդությամբ և սուբյեկտային կազմով, իսկ տվյալ պարագայում գործին մասնակցող անձանց՝ իրենց իրավունքների ոչ ժամանակին իրականացումը կհանգեցնի վերջիններիս համար անբարենպաստ հետևանքների, որի հետևանքով օրենսդրական նման ամրագրումը ոչ թե կծառայի ռոգուս գործին մասնակցող անձանց, այլ հակառակը՝ բարդություններ կստեղծի յուրաքանչյուր ուշացած դատավարական կոնկրետ գործողության կատարման հարցում գործին մասնակցող անձի՝ իր կամքից անկախ հանգամանքներում տվյալ գործողությունը չիրականացնելը հիմնավորելու հարցում: Անհրաժեշտ է նշել, որ Ռուսաստանի Դաշնության արբիտրաժային դատավարության օրենսգիրքը ևս չի նախատեսում հատուկ ժամկետներ կորպորատիվ վեճերով գործերի քննության համար<sup>1</sup>:

Միակ լուծումն այն է, որ դատարանները թե՛ կորպորատիվ, թե՛ այլ գործերով ևս քննարկման առարկա դարձնեն հայցվող պահանջի հրատապության հարցը, գործի քննությունը սեղմ ժամկետներում ավարտելու հարցը, անբարեխիղճ գործին մասնակցող անձանց իրավունքների չարաշահման հարցը, անհիմն հայցերի շուտափույթ լուծումը՝ հաշվի առնելով նաև, որ ընկերության դեմ շատ հաճախ ներկայացվում են հայցեր, որոնք նպատակ են հետապնդում ենթադրյալ որոշակի նյութական շահ ստանալու միջոցով խաթարելու իրավաբանական անձի գործունեությունը և այլն: Այսինքն՝ դատարանի կողմից ողջամիտ ժամկետների պահպանման հարցը ոչ թե պետք է կրի զուտ դեկլարատիվ բնույթ, այլ գործնականում կիրառելի լինի և ծառայի իր նպատակին:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն իր DH (97) հանձնարարականում ընդգծել է, որ «արդարադատության իրականացման չափազանց ձգձգումը լուրջ վտանգ է իրավունքի գերակայության համար»: Գործը ողջամիտ ժամկետում քննելը «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (այսուհետ նաև՝ Եվրոպական կոնվենցիա) իմաստով դիտվում է որպես անձի արդար դատաքննության իրավունքի տարր (Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մաս): Եվրոպական դատարանը նշում է, որ դատաքննության տևողության ողջամիտ լինելը պետք է գնահատվի յուրաքանչյուր կոնկրետ գործի հանգամանքներից ելնելով և հետևյալ չափանիշների օգնությամբ. գործի բարդությունը, կողմերի վարքագիծը, գործը քննող մարմինների վարքագիծը և թե դիմողի համար ինչն առանցքային նշանակություն ուներ<sup>2</sup>: Եվրոպական դատարանն իր պրակտիկայում արձանագրել է նաև, որ Եվրոպական կոնվենցիան կոչված է ապահովելու ոչ թե իրավունքի տեսական արկայությունը, այլ դրա պրակտիկ կիրառությունը և արդյունավետությունը<sup>3</sup>:

«Սահմանադրական դատարանը ևս արձանագրել է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելու պահանջն արդար դատաքննության իրավունքի անկյունաքա-

<sup>1</sup> Տե՛ս ՌԴ արբիտրաժային դատավարության օրենսգիրքը

//[http://www.consultant.ru/document/cons\\_doc\\_LAW\\_37800/354172bb81a5c00a4ac63ef31dae3f8c007451bb/](http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_37800/354172bb81a5c00a4ac63ef31dae3f8c007451bb/) (18.10.2021):

<sup>2</sup> Տե՛ս Լաինոն ընդդեմ Իտալիայի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 18.02.1999 թվականի վճիռը, Կատե Կլիտշե դե լա Գրանժն ընդդեմ Իտալիայի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 27.10.1994 թվականի վճիռը, Հոկանենն ընդդեմ Ֆինլանդիայի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 23.09.1994 թվականի վճիռը:

<sup>3</sup> Տե՛ս Իմբրիոսիան ընդդեմ Շվեյցարիայի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 24.11.1993 թվականի վճիռը:

րերից մեկն է, և դրա խախտումը կարող է խաթարել արդարադատության բուն էությունը, ուղղակիորեն վտանգել արդարադատության իրականացման ողջ գործընթացի արդյունավետությունը և կասկածի տակ դնել այդ գործընթացի վստահելիությունը: Միջազգայնորեն ընդունված է այն մոտեցումը, որի համաձայն՝ «ուշացած արդարադատությունը հավասար է մերժված արդարադատության» (օրինակ՝ ECHR, Cases of Vazagashvili and Shanava v. Georgia, application no. 50375/07, 18/07/2019, and Lopatin and Medvedskiy v. Ukraine, applications nos. 2278/03 and 6222/03, 20/05/2010), քանի որ գործի քննության անհարկի ձգձգումները, նույնիսկ անկախ գործի ելքից, անարդյունավետ են դարձնում մարդու իրավունքների պաշտպանությունը: (..) ՀՀ Սահմանադրական դատարանը գտել է նաև, որ պետությունն առաջին հերթին պետք է սահմանի անհրաժեշտ կազմակերպական այնպիսի կառուցակարգեր և ընթացակարգեր, որոնք կապահովեն ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի արդյունավետ իրացումը՝ կանխելով արդար դատաքննության իրավունքի հնարավոր խախտումները, մյուս կողմից, գործի քննության ձգձգումների դեպքում պետք է ապահովի ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի արդյունավետ պաշտպանության հնարավորություն: Անդրադառնալով գործի քննությունը ողջամիտ ժամկետում իրականացնելու պահանջի պահպանումն ապահովելու հարցին՝ Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ պետությունն իր իրավական համակարգը պետք է կազմակերպի այնպես, որ դատարանները հնարավորություն ունենան և իրենց իրավասությանը վերապահված գործերը քննեն ողջամիտ ժամկետում (տե՛ս նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Case of Cappello v. Italy, application no. 12783/87, 27/02/1992 գործով արտահայտած դիրքորոշումը)<sup>1</sup>:

Եվրոպական դատարանը ժամկետի ողջամտության գնահատման չափանիշ է դիտում գործի բարդությունը, դիմողի և իշխանությունների վարքագիծը, որոնք գործի քննության ձգձգման պատճառ են դարձել, դիմողի համար այն արժեքի կարևորությունը, որին վերաբերում է դատաքննությունը<sup>2</sup>:

Ողջամիտ ժամկետներում գործի քննության իրավունքը, արդար դատաքննության իրավունքի գործառնական տարր լինելով, նպատակ ունի շահագրգիռ անձին պաշտպանել երկարատև անորոշ վիճակից և ապահովել արդարադատության իրականացումն առանց ձգձգումների, ինչը կարող է վտանգել գործի քննության արդյունավետությունն ու վստահելիությունը<sup>3</sup>:

Ղատավարագետ, ի.գ.դ. Վ.Հովհաննիսյանի կարծիքով՝ արդարադատության հիմնական նպատակը սուբյեկտիվ իրավունքների պաշտպանությունն է, որը պետության կողմից երաշխավորվում է դատարան դիմողի համար ողջամիտ ժամկետում իրավական (օրինական և հիմնավորված) վերջնական դատական ակտ ստանալու և հարկադիր կատարման իրավունքների լիարժեք ապահովման միջոցով<sup>4</sup>:

Այս առումով հատկանշական է ընդգծել, որ դատարան իրավունքների պաշտպանության հայց կարող են ներկայացնել նաև իրավաբանական անձի այն անբարեխիղճ մասնակիցները, ովքեր չեն տիրապետում ընկերության կանոնադրական

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 16 մարտի 2021 թվականի թիվ ՍՂՈ-1585 որոշումը ([www.concourt.am](http://www.concourt.am)) (18.10.2021):

<sup>2</sup> Տե՛ս **Моул Н., Харби К., Алексеева Л.** Европейская конвенция о защите прав человека и основных свобод, статья 6: право на справедливое судебное разбирательство, прецеденты и комментарии. М., 2001, էջ 37-40:

<sup>3</sup> Տե՛ս **Տեր-Վարդանյան Հ.Մ.**, Արդար դատաքննության իրավունքի սահմանադրաիրավական հիմքերը Հայաստանի Հանրապետությունում, Երևան, 2009, էջ 111:

<sup>4</sup> Տե՛ս **Հովհաննիսյան Վ.Վ.**, Ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի իրացման հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում ՀՀ սահմանադրական բարեփոխումների լույսի ներքո, «Բանբեր Երևանի համալսարանի, Իրավագիտություն», Երևան, 2017, № 3 (24), էջ 71:

կապիտալում մասնակցության նվազագույն քանակին, որի հետ օրենքն ուղղակիորեն կապում է դատարան հայց ներկայացնելու իրավունքը:

Մասնավորապես՝ կորպորատիվ իրավահարաբերությունների սուբյեկտային կազմը կարող է որոշակի սահմանափակումներ կրել: Օրինակ՝ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցը (մասնակիցները), որը (որոնք) գումարային առումով տնօրինում է (են) ընկերության առնվազն **10 տոկոս** բաժնեմասը, իրավունք ունի (ունեն) դատական կարգով պահանջել ընկերության այլ մասնակցի հեռացումն ընկերությունից, եթե նա իր գործողություններով կամ անգործությամբ դժվարացնում կամ անհնարին է դարձնում ընկերության բնականոն գործունեությունը: Օրենսդիրն այլ դեպքեր ևս նախատեսում է:

Այսինքն՝ ըստ էության հայցվորը, գիտակցելով, որ չի տիրապետում վերը նշված իրավունքին, ներկայացնում է հայց իրավաբանական անձի բնականոն գործունեությունը խոչընդոտելու նպատակով: Թերևս այս առումով, անհիմն հայցերի քանակը նվազեցնելու նպատակով, կորպորատիվ վեճերով հայցադիմումի ձևին ու բովանդակությանը և կից ներկայացվող փաստաթղթերին որոշ հատուկ կանոններ սուբյեկտային նախադրյալների վերաբերյալ ներկայացնելու առնչությամբ սահմանելը որոշակի դժվարություններ կստեղծի դատական պրակտիկայում: Այս առումով նշենք, որ 1998թ. խմբագրությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի<sup>1</sup> 125-րդ հոդվածի 1-ին մասի դ) ենթակետը սահմանում էր, որ դատարանը կիրառում է արագացված դատաքննություն, եթե հայցն ակնհայտ անհիմն է: Այսինքն՝ նման դատավարական կարգավորման պայմաններում դատարանը, տեսնելով, որ հայցը ներկայացվել է ոչ պատշաճ սուբյեկտի և նման պահանջ ներկայացնելու իրավագործությամբ չօժտված անձի կողմից, իրավասու էր կիրառել արագացված դատաքննություն և անցնել գործի ըստ էության լուծմանը՝ գործին մասնակցող անձ իրավաբանական անձին և համապատասխանաբար գործին մասնակցող այլ անձանց անհիմն չժանրաբեռնելով դատական գործընթացով և ծախսերով:

Ըստ դատավարագետ, ի.գ.դ. Ս.Գ.Մեղրյանի՝ ի տարբերություն դատավարության ավանդական ընթացակարգի, արագացված դատաքննությունը վարույթի պարզեցված տեսակ է, որն օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում դատարանի որոշմամբ իրականացվում է գրավոր (փաստաթղթային) ընթացակարգով (բացառապես դատավարության մասնակիցների ներկայացրած և գործում առկա փաստաթղթերի հիման վրա)՝ առանց դատական նիստ իրավիդելու կամ արդեն ընթացող գործի քննությունը դադարեցնելով (եթե նման որոշում կայացվում է դատական նիստում), որն ավարտվում է գործը լուծող վերջնական դատական ակտի կայացմամբ ու հրապարակմամբ: Նման վարույթի շրջանակներում դատարանը բանավոր ապացույցներ չի հետազոտում (կողմերին, վկաներին և փորձագետներին չի հարցաքննում), տեղազննություններ չի կատարում և դատական հանձնարարություններ չի տալիս, այլ սահմանափակվում է մինչև արագացված դատաքննություն կիրառելու մասին որոշում կայացնելու պահը կողմերի ներկայացրած բացատրությունների, առարկությունների և ապացույցների, ինչպես նաև գործում առկա փորձագիտական եզրակացությունների և այլ գրավոր նյութերի հետազոտմամբ ու զնահատմամբ: (..) Հաճախ դատական պրակտիկայում հայցը որակվում էր ակնհայտորեն անհիմն նաև այն դեպքերում, երբ դատարանը ներկայացված ապացույցների հիման վրա հանգում էր հետևության, որ հայցվորը ոչ պատշաճ է՝ չունի պատասխանողին նման պահանջ ներկայացնելու իրավունք կամ դատարան դիմելու հիմք հանդիսացող շահագրգռվածություն: Հայցվորի ենթադրյալ ոչ պատշաճությունը չի կարող հիմք հանդիսանալ ներկայացված և վարույթ ընդունված հայցն ակնհայտորեն անհիմն որակելու համար, եթե հայցվորի ոչ պատշաճությունը «ակնհայտ» չէ, վիճարկվում է նրա կողմից (հանդիսանում է վեճի առար-

<sup>1</sup> Ընդունվել է 17.06.1998թ., ուժը կորցրել է 09.04.2018թ.: Տե՛ս ՀՀՊՏ 1998.09.09/20(53):

կա), պահանջում է ներկայացված ապացույցների հետազոտում և գնահատում: Նման իրավիճակներում վեճը պետք է քննվի ու լուծվի դատարանի կողմից ֆորմալ դատավարության բոլոր պահանջների և կողմերի դատավարական իրավունքների պահպանմամբ, այլ ոչ պարզեցված եղանակով՝ արագացված դատաքննության կարգով: Նման իրավիճակներում «ակնհայտության» մասին խոսելն ավելորդ է: Այլ մոտեցման պարագայում կոպտորեն խախտվում է ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքը, որը դատարան դիմած սուբյեկտին տալիս է արդարացի և հրապարակային դատաքննության բացարձակ հնարավորություն, այն դեպքերում, երբ քննվում է «իր գործը» (վեճը), «որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները» (այդ թվում՝ դրանց առկայությունը կամ բացակայությունը)<sup>1</sup>:

09.04.2018 թվականից գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքն այլևս չի նախատեսում դատարանի արագացված դատաքննություն կիրառելու իրավական հնարավորությունը՝ հայցն ակնհայտ անհիմն լինելու հիմքով (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 303-րդ հոդված): Սակայն կարծում ենք, որ այն դեպքերում, երբ հայցվորի ոչ պատշաճ սուբյեկտ լինելու փաստն ուղղակիորեն արձանագրված է օրենքներում, և այն տվյալ գործով վեճի առարկա չէ, ապա դատարանը պետք է ունենա հնարավորություն կիրառելու արագացված դատաքննություն և հայցը մերժի՝ հաշվի առնելով, որ մասնակիցը չի տիրապետում իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում մասնակցության նվազագույն քանակին: Ուստի՝ դատարաններին կորպորատիվ վեճերով անհիմն հայցերի քննությունից բեռնաթափելու նպատակով անհրաժեշտ է, որ դատարանները նախնական դատական նիստին քննության առարկա դարձնեն կորպորատիվ վեճերով հայցվորի՝ որպես պատշաճ սուբյեկտի հանդես գալու հանգամանքը, այսինքն՝ պարզեն՝ արդյո՞ք մասնակիցը տիրապետում է օրենքով սահմանված համապատասխան մասնակցության չափին, որպեսզի նման պահանջով հայց ներկայացնի դատարան:

Հետևաբար, հաշվի առնելով վերոգրյալը, առաջարկում ենք ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ գլխով սահմանել, որ դատարանը իրավունք ունի կորպորատիվ վեճերով կիրառել արագացված դատաքննություն և հայցը մերժել, եթե մասնակիցը չի տիրապետում իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում մասնակցության նվազագույն այն քանակին, որի հետ օրենքն ուղղակիորեն կապում է դատարան հայց ներկայացնելու իրավունքը:

<sup>1</sup> Տե՛ս Մեղրյան Ս.Գ., Արագացված դատաքննության ինստիտուտը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նախագծում, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, գլխ. խմբ. Գ. Ս. Ղազինյան, Երևան, ԵՊՀ, 2017, էջեր 254-260:

## ПРОБЛЕМЫ РАССМОТРЕНИЯ ДЕЛ ПО КОРПОРАТИВНЫМ СПОРАМ В РАЗУМНЫЕ СРОКИ В ГРАЖДАНСКОМ СУДОПРОИЗВОДСТВЕ РА

Лариса Багдасарян

*Аспирант кафедры гражданского процесса ЕГУ*

В результате исследования было зафиксировано, что в связи с рассмотрением определенных дел по корпоративным спорам существуют ограничения как по рассмотрению дел в упрощенном порядке, так и по ускоренному судебному разбирательству, на основании которых существует проблема соблюдения разумных сроков рассмотрения дел по корпоративным спорам. В связи с решением указанной правовой проблемы было сделано предложение, которое позволит суду применить ускоренное судебное разбирательство и отклонить иск, экономя как судебные издержки лиц, участвующих в деле, так и разгрузить суд от неуместного рассмотрения ряда дел, которыми лицо, участвующее в деле, злоупотребляет реализацией процессуальных прав.

## THE PROBLEM OF EXAMINATION OF CORPORATE DISPUTE CASE WITHIN A REASONABLE TIME IN RA CIVIL LITIGATION

Larisa Baghdasaryan

*PHD Student of the YSU Chair of Civil Procedure*

As a result of the investigation, it was found out that there are some restrictions regarding the examination of certain cases of corporate disputes, both in the case of simplified and expedited proceedings, on the basis of which there is a problem of maintaining a corporate dispute case within a reasonable time. Regarding the solution of the mentioned legal problem, there has been made a proposal, which will give an opportunity to the court to apply an expedited trial and reject the claim, saving both the court costs of the persons involved in the case, as well as to relieve the court from unnecessary examination of a number of cases in which there is a misuse of the realization of procedural rights by the involved person in the case.

**Բանալի բառեր** – կորպորատիվ իրավահարաբերություններ, կորպորատիվ վեճեր, ողջամիտ ժամկետներում գործի քննության իրավունք, արագացված դատաքննություն, իրավունքի չարաշահում, ոչ պատշաճ հայցվոր

**Ключевые слова:** Корпоративные правоотношения, корпоративные споры, право на рассмотрение дел в разумные сроки, ускоренное судебное разбирательство, злоупотребление правом, ненадлежащий истец.

**Key words:** Corporate legal relations, corporate disputes, the right to hear a case within a reasonable time, expedited proceedings, misuse of law, inappropriate claimant.